

ԻՐԱՆԻ 1906Թ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ
ԵՒ
ՀԱՅԵՐԻ ԲԵՐԱԾ ՄԱՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ
1906–11 ԹԹ. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ

ԼԵՒՈՆ Գ. ՄԻՆԱՍԵԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

Սոյն դարասկզբում իրանում տեղի ունեցած սահմանադրական կոիւներին, իրանահայերն եւս բերել են իրենց անվերապահ մասնակցութիւնը, որ արժանի է յիշատակութեան: Ներկայի սեղմ տողերով մեր նպատակն է անդրադառնալդրան եւ՝ առնչուող դէպքերին ու անցուղարձին:

Իրանին իշխող նախավերջին թագաւորութիւնը գտնուում էր Ղաջարեան տոհմի ձեռքում: Այս տոհմի հիմնադիրն է եղել Աղա Մահամադ խանը (1796–97), որը մի շաբթ պայքարներից յետոյ, 1779 թուին գրաւում է Թեհրանը եւ այն դարձնում է իր մայրաքաղաքը (1786):

Աղա Մահամադ խանի յաջորդ արքաներն են եղել Ֆաթալի Շահը (1797–1834), Մահամադ Շահը (1834–1848), Նասրէդին Շահը (1848–1896), Մողաֆէրէդին Շահը (1896–1907), Մահամադ Ալի Շահը (1907–1909) եւ Վերջին արքան՝ Ահմադ Շահը (1909–1925):

Մողաֆէրէդին արքան, որ գահակալել է 1896ից մինչեւ 1907, երկրի զարգացման հարցում իր անփոյթ եւ անտարբեր վերաբերմունքի, ինչպէս եւ միքանի անգամ Եւրոպա կատարած ճամբորդութիւնների պատճառով, երկիրը միշրճել էր մեծ պարագերի տակ, այն հասցնելով սնանկութեան դուռը: Բնակչութիւնը մատնուել էր խիստ թշուառութեան, իսկ պետական պաշտօնէութիւնը չէր կարողանում ժամանակին ստանալ իր ռոճիկը:

Ահա այս ծանր վիճակի պատճառով, 1906 թուի Յուլիսին սկսւում են խիստ դժգոհութիւններ եւ ծայր են տալիս սահմանադրական կարգեր ստեղծելու ժողովրդական պայքարներ եւ բողոքներ:

Այս շարժումներին իրենց մասնակցութիւնն են բերում թէ՛ Եւրոպական գաղափարներ ունեցող երիտասարդներ եւ թէ՛ որոշ կրօնականներ ու ազնուականներ:

1906 թուի Յուլիսին, շուրջ տաս հազար հոգի, ձերբակալութիւննե-

րից զերծ մնալու համար, ապաստանում են թեհրանի բրիտանական դեսպանատունը, որի պատճառով էլ Մոզաֆէրէդին Շահը խոստանում է բարենորոգութիւններ կատարել: Նա 1906 թուի Օգոստոսի 5ին, մի հրավարտակով հռչակում է սահմանադրութիւն, որով նոյն թուի Հոկտեմբերի 7ին պաշտօնապէս բացւում է Պարսկաստանի անդրանիկ խորհրդարանը, մշակում է հիմնական օրէնք, հաստատում է երկրի սահմանադրութիւնը, որ նոյն թուի Դեկտեմբերի 30ին, վաւերացւում է արքայի կողմից: Այդ հիման վրայ գաւառական քաղաքներում ընտրուում են քաղաքային խորհուրդներ (անջոմաններ), որոնց իրենց մասնակցութիւնն են բերում նաև հայերը¹:

Այս բարենորոգչական ձեռնարկներով երկիրը խաղաղուում է, իսկ անջոմանները լծւում են անհրաժեշտ խնդիրների կարգաւորման աշխատանքներին:

Այս խնդիրներից կարճ ժամանակ յետոյ, 1907 թուի Յունուարին, վախճանուում է Մոզաֆէրէդին Շահը, որին յաջորդում է իր որդին՝ Մահմադ Ալի Շահը: Բայց նա դէմ լինելով սահմանադրութեան, եւ օգտուելով սահմանադրականների միջեւ ծագած վէճից, ուզեց վերահսատաել բացարձակ միապետութիւնը:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԴԳԶՈՒՄՆԵՐՆ ԵՒ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՆԵՐԻ ՈՒ ՄԻԱՊԵՏԱԿԱՆՆԵՐԻ ԿՈՒԽՆԵՐԸ

Սահմանադրականների հետ ունեցած պայքարի այդ օրերին, 1908 թուի Փետրուարի 28ին, երբ արքան անցնելիս է լինում փողոցով, նրա կառքի վրայ ուումք է նետուում, բայց ականց վրիպում է եւ Շահը մնում է անվնաս: Ի հետեւանք դրան, նոյն թուի Յունիսի 10ին (23ին, ըստ նոր տոմարի) պետական զօրքը շրջապատում է խորհրդարանը եւ ուուս գնդապետ Վլադիմիր Մ. Լիախովի գլխաւորութեամբ ոմքակոծութեան է ենթարկում խորհրդարանի շէնքը: Լուծարքի են ենթարկում խորհրդարանն ու գաւառական խորհուրդները, տեղի են ունենում ձերբակալութիւններ, իսկ անջոմանների որոշ անդամներ փախուստ են տալիս արտասահման:

Ի տես այս բռնութիւնների, ժողովուրդը դուրս է գալիս ուժեղ պայքարի եւ գրեթէ ամրող իրանը, մանաւանդ՝ Թաւրիզը, Ռաշտը, Սպահանը ըմբռուստանում են արքայի դէմ: Այս պայքարին իր անմիջական օժանդակութիւնն ու աջակցութիւնն է բերում իրանահայութիւնը՝ գլխաւորութեամբ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան տեղական մասնաճիւղերին:

Այժմ տեսնենք թէ հայերը՝ նչ ձեւով իրենց մասնակցութիւնը բերին սահմանադրականների ու միապետականների միջեւ այս կոխւներին:

ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԹԱՒՐԻՉՈՒՄ ԵՒ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԱՅԼ ՇՐՋԱՎՆԵՐՈՒՄ

Ինչպէս իրանի ամբողջ ժողովուրդը, այնպէս էլ Թաւրիզի եւ շրջանի յեղափոխականները, գլխաւորութեամբ Սաթթար եւ Բաղէր խաների, դուրս են գալիս պայքարի՝ միապետականների դէմ: Թաւրիզի յեղափոխական—սահմանադրականներին օգնութեան են գալիս Կովկասի թուրք եւ վրացի յեղափոխականներ, ինչպէս եւ հայեր, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Ատրպատականի մարտիկների հետ, որոնց միանում են նաեւ մեծ թուրք այլ մարտիկներ հին Զուղայից եւ Նախիցեանի շրջանից, շուրջ 30 հոգի, որոնց հետ նաեւ Ռոստոմը, Քեռին եւ ուրիշներ²:

Տեղի են ունենում մեծ թուրք բախումներ միապետականների եւ սահմանադրականների միջեւ: Հայ մարտիկների պատրաստած ռումբերը, իրենց պատճառած զոհերով, մեծ ողեւորութիւն են առաջ բերում սահմանադրականների ու ժողովրդի մէջ: որով եւ պայքարը շարունակւում է ամենայն եռանդով:

Այս կոիւներից մէկի ընթացքում, երբ հայերի ջանքերով յաղթական են դուրս գալիս յեղափոխականները, Սաթթար խանը դիմելով Ռոստոմին ասում է.

— «Ռուստամ ջան, հաւատացնւում եմ քեզ, եթէ քո այս «Դղաներից» (տղաներից—Լ.Մ.) 25ի փոխարին 250 հոգի ունենայի, թնդանօթներս վեցրած մինչեւ Պետրուրդ կը քչի»³:

Նոյն ժամանակներում կոիւներ են տեղի ունենում նաեւ Ատրպատականի զանազան շրջաններում՝ Թաւրիզում, Մուժամբարում, Ուրմիայում եւ այլ վայրերում: Այս կոիւներին զոհուած հայ մարտիկներից ոմանց յուշակոթողը գտնւում է Թաւրիզի Սրբ Սարգիս եկեղեցու բակում: Նրանց անունները բերելու ենք յօդուածի վերջում⁴:

ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ՌԱՇՏՈՒՄ

Ժողովրդական այս ընդվզումների մէջ իր առանձին տեղն ունի Գիլանի շրջանը, որտեղի գլխաւոր ողին հանդիսանում էր Եփրեմ Դաւթեանը (Եփրեմ խանը): Նա շարժման հենց սկզբնական օրերից խիստ հետաքրքրուած էր Պարսկաստանի յեղափոխութեամբ եւ սահմանադրական նոր կարգերի ստեղծմամբ:

Առ այդ, համախորհուրդ Հ.Յ.Դ. պատկան մարմնի, իր ուժերին ներած չափով, Եփրեմը միրճւում է այդ պայքարների մէջ եւ Գիլանի շրջանի պարսիկ յեղափոխականների հետ, գլխաւորութեամբ Սահմանադր Վալի խանի, ինչպէս եւ հայ ու վրացի միքանի տասնեակ կամաւորների, մի

շարք գործողութիւններից յետոյ, գրաւում է Ռաշտը ապա անցնում է Ղազուին 19 Ապրիլ 1908ին, գրաւում է նաեւ այն եւ շարժում դէպի թէհրան:

Մի շարք կռիւներից ու պետական շրջանակների հետ ունեցած ապարդիւն բանակցութիւններից յետոյ, Եփրեմն իր փոքրաթիւ զօրքով ու Բախտիարի ցեղից յեղափոխականների աջակցութեամբ, գլխաւորութեամբ Սարդար Ասադի, յարձակւում է Թէհրանի վրայ եւ մի շարք կռիւներից յետոյ, յաջողում է կոտրել պետական զօրքի եւ ռուս կողակների դիմադրութիւնը եւ գրաւել խորհրդարանի չէնքն ու դրան կից մզկիթը:

Այս ծանր ու տագնապալի կացութեան իրը եւ հետեւանք, Մահամադ Ալի Շահը ապաստանում է ռուսական դեսպանատուն, որով եւ կեանքի է կոչւում ժամանակաւոր մի Բարձրագոյն Խորհուրդ, մինչեւ նոր խորհրդարանական ընտրութիւնների անցկացումը:

Բարձրագոյն Խորհուրդը օրուայ անցուղարձերը նկատի առնելով, Մահամադ Ալի Շահին յայտարարում է պաշտօնանկ եւ նրա 12ամեայ որդուն՝ Ահմադ Ալիին նշանակում է թագաւոր:

Թէհրանի գրաւումով ու պետական կազմի փոփոխութեամբ, Իրանի ընդհանուր ոստիկանապետ է նշանակում Եփրեմ Խանը:

Սահմանադրականների Թէհրանի գրաւումից եւ Եփրեմի ընդհանուր ոստիկանապետ նշանակուելուց յետոյ, Եփրեմ խանը մտածում է իր հեծելազօրքում ունենալ նաեւ հայ կամաւորներ, ուստի այս առթիւ մի հեռագիր է յղում Սպահան, Յովսէփ Ղարախանեանին, որի թարգմանութիւնը բերում ենք ստորեւ⁵.

«Ղարախանեանց

Սպահան

Որովհետեւ պարսից կառավարութիւնը մտադիր է երկու հարիւր հեծելազօրքունենալ, հետեւարար սրանով յայտարարում եմ Զարմահալի եւ Փերիայի հայ անպսակ երիտասարդներին, որ երբ ցանկութիւն ունենան զինուորական ծառայութեան մէջ մտնելու, թող ցանկացոյները գան Զուղա եւ դիմեն ինձ, մինչեւ ճանապարհածախս ուղարկեմ Թէհրան գալու:

Հրացան, ձի եւ բաւարար ռոճիկ կը վճարուի:

Եփրեմ

ի 14 Յուլիսի 1911»:

Ի պատասխան այս կոչ-հրաւէրին, 31 հոգի Փերիայի գլուղերից (որոնցից 17ը Խոյգանից, Երկու հոգի Քեարւանդի գիւղերից, 2 հոգի Զարմահալ գաւառից, եւ 4 հոգի՝ Նոր Զուղայից) Թէհրան են գնում ու

զինուորագրւում³:

Վերոյիշեալ կամաւորներից միքանիսը զոհւում, իսկ միքանիսն էլ վիրաւորւում են: Այս զոհւածների անունները եւս տալու ենք վերջում:

Թէեւ իշխանութիւնը փոխուել էր, բայց միապետականների ընդդիմութիւնը որոշ շրջաններում դեռեւս բոլորովին չէր ճնշուել: Այս էտապում իր հակասահմանադրական պայքարով յայտնի է դառնում գահնկեց արքայի եղբայր Սալար Դովլէն:

Կոիւները աւելի սաստկանում են, երբ գահընկեց Շահը արտասահմանից վերադառնարով, ճիգ է թափում կրկին ձեռք բերելու իր գահը:

ԵՓՐԵՄԻ ԶԲՆԱԿԻՑ ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐՆԵՐՆ ՈՒ ԲԱԽՏԻԱՐԻ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԸ

Սահմանադրական շարժման մէջ եւ առաջացած պայքարներում անմասն չէր նաեւ Սպահանի նահանգը: Այստեղ աչքի էր ընկնում նաեւ Զարմահալ գաւառի Բախտիարի Լոռ ցեղախմբից Սարդար Ասադը, իր զինակիցներով, որոնցից էր նաեւ Աբրահամ Խան Յովակիմեանը (Բախտիարին): Վերջինս հանդիսանում էր Եփրեմ Խանի աջ թերը:

Սպահանի յեղափոխականները մի շարք կրիւներից յետոյ՝ 1908 թուի Դեկտեմբերին, գրաւում են Սպահանը եւ շարժւում դէպի Թէհրան, ուր միանում են Գիլանից եկած Եփրեմի խմբին եւ միասնական ջանքերով յառաջ տանում յեղափոխական աշխատանքը:

Սահմանադրութեանը հայերի բերած մասնակցութեան եւ դերին որպէս մէկ նմուշ, ստորեւ կը մէջբերենք Իրանի քաղաքական գործիչ եւ խորհրդարանի նախագահ Սէյլ Հասան Թաղիզադէի պատգամը⁴.

«... Սահմանադրական շարժումների սկզբից եւեթ հայերը մեծ նուիրուածութեամբ եւ միակամութեամբ համագործակցել են միւս ազատականներին, յանուն Իրանի քաղաքական ազատութեան:

... Հայերի զոհաբերութիւնները, յանուն Իրանի ազատութեան, մի դափնեպսակ են կազմում պատմութեան մէջ, յանձին Եփրեմ Խանի, որ իրականում առաջնակարգ մի հերոս էր եւ վերջն էլ իր կեանքը զոհեց այդ ճամբէին: Իրանցիք երբեք չպիտի մոռանան նրա եւ նրա միւս գործակիցների անունները:

Այս մտավախութիւնն ունեմ, որ ես միակ ապրողն եմ այդ փաղանգի, եւ որպէս այդպիսին, այս միքանի տողը գրում եմ «Ալիք»ին՝ սահմանադրութեան 50րդ տարեդարձի առթիւ, ի յիշատակ այն միասնական գործակցութեան եւ նրանց՝ հայ, պարսիկ, վրացի նահատակների – մաքրամաքուր հոգիների, որոնց ջանքերով, ցայժմ անսասան են մնացել Սահմանադրութեան կարգերը»:

ԵՓՐԵՄԻ ՄԻԱՊԵՏԱԿԱՆՆԵՐԻ ԴԵՄ ՎԱՐԱԾ ԿՈՒԽՆԵՐՆ ՈՒ ԻՐ ԶՈՀՈՒԵԼՈ

Թեհրանի գրաւումից եւ խորհրդարանի հաստատումից յետոյ եւս, դեռևս չեն դադարում միապետականների սաղբանքները. Նրանք գահընկեց արքայի եղբօր՝ Սալար Դովլէի, Արշադ Դովլէի եւ ալլոց կողմից շարունակում էին ընդդիմանալ՝ իրանի տարբեր շրջաններում:

Այս ապստամբութիւններից, իրենց բնոյթով, երկուսը շատ վտանգաւոր էին, որոնցից մէկը ղեկավարում էր Արշադ Դովլէն, իսկ միւսը՝ Սալար Դովլէն:

Արշադ Դովլէն, այլ օժանդակութիւններով եւ մեծ զօրք հաւաքելով, գրաւում է Գորգանն ու Մազանդարանը եւ արշաւում Թեհրան:

Իր դէմ ուղարկուած պետական զօրքին պարտութեան մատնելով, Արշադ Դովլէն գալիս հասնում է մինչեւ Թեհրանի արուարձանները եւ սպառնում մայրաքաղաքին: Այս նեղ կացութեան ժամանակ բոլորի հայեաքը ուղղուում է դէպի Եփրեմ խանը, որին ԱՄՆից հրաւիրուած ֆինանսական խորհրդական Ուիլեամ Մորգան Շուստէրը անուանել էր «Պարսկաստանի Գարիբալդի»ն:

Ահա այս ճգնաժամային օրերին, Եփրեմը վերակազմում է իր բանակը եւ Քեռու օժանդակութեամբ եւ 200 հայ մարտիկների ու բախտիարցիների գործակցութեամբ, պարտութեան է մատնում Արշադ Դովլէին, նաեւ մի բանակ է ուղարկում հիւսիսային շրջանները, ապստամբութիւնները ճնշելու համար:

Հակառակ դրան որ թշնամին թուով շատ գերազանց էր, նաեւ՝ զինուած թնդանօթներով, Եփրեմի յանդուզն ուազմավարութեամբ, սահմանադրականներին յաջողուում է պարտութեան մատնել միապետականերին, որոնց մի մասը սպանում, մի մասը փախչում, իսկ մի մասն էլ գերի է ընկնում:

Հրամանատար Արշադ Դովլէն, որ վիրաւորուած մնում է դիրքում, կառավարութեան թոյլտուութեամբ եւ Եփրեմի հրամանով գնդակահրուում է:

Այս յաղթանակից յետոյ մի արշաւախումբ եւս ուղարկուում է Մազանդարան, ուր եւս տարուած յաղթանակի իրրեւ արդիւնք, խաղաղուում է եւ շրջանը մաքրուում միապետականներից⁸:

Երկրորդ գլխաւոր ապստամբութիւնը ղեկավարուում էր Սալար Դովլէի կողմից, որը Քերմանշահի եւ Համադանի շրջանների հակասահմանադրականներին իր շուրջը հաւաքած, պետական զօրքերին զինաթափ անելով, Սաւէի ճանապարհով սպառնում էր գրաւել Ղումը եւ շարժուել Թեհրանի վրայ:

Սալար Դովլէի յարձակումները երկու անգամ ետ են մղւում Եփրեմի

Հերոս մարտիկների կողմից-բայց նա կը կին իր ուժերը հաւաքելով Համադանից ոչ հեռու թշհար գիւղի մօտ է յայտնւում: Այս անգամ, 1912 թուի Ապրիլի 25ին, նրա դէմ գրոհում է Եփրեմը իր զինուորներով: Ահա այդ կուրի ժամանակ, երբ գրաւուել էր բերդը, եւ յեղափոխականները ուզում էին ներս մտնել, մի աշտարակից կրակ են բացում հայ զինուորների վրայ, որոնցից միքանիսը սպանվում են: Եփրեմը խիստ բարկանալով ինքն է ուզում ներս մտնել: Այդ պահին, բարձր այդ աշտարակից դարձեալ կրակում են, որին զոհ է գնում նաեւ Եփրեմը:

Այդ կուրում թշնամին ունենում է 250 սպանուած, 150 գերի, իսկ յեղափոխականներն ունենում են 30 սպանուած ու վիրաւոր:

Եփրեմի մահից յետոյ Քեռին է ստանձնում զօրքի հրամանատարութիւնը, իսկ Եփրեմի դին փոխադրուում է Թեհրան եւ մեծ շուքով ու պետական աւագանիի ներկայութեամբ, թաղուում է «Հայկազեան» դպրոցի բակում:

Եփրեմի անունով 1974 թուին, մի ցուցափեղկ բացուեց Նոր Ջուղայի վանքի թանգարանում, ուր զետեղուած են նրան վերաբերող իրեր, գրքեր եւ զանազան փաստաթղթեր:

ՅԱՆԿ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԿՈՒԽՆԵՐԻՆ ԶՈՀՈՒԱԾ ՀԱՅ ՄԱՐՏԻԿՆԵՐԻ

1. Ալեքսան Բալարանչի (Թաւրիզից),
2. Աստուր (Թեհրանից),
3. Ասլան (արեւմտահայ),
4. Արտեմ Կոտաբաշեան (մադարասից),
5. Աւագ Մանուկեան,
6. Աւագ Պետրոսեան (Մուշից),
7. Բախչի Գաբրիէլեան (Ղարաբաղի Սերուան գիւղից),
8. Գէորգ Կիրակոսեան (Սեբաստիայից),
9. Գէորգ Օրդուխանեան (Սեւ Գէորգ) (Մալմաստից),
10. Դաւիթ (Գորիսից),
11. Եաղչեան,
12. Եփրեմ Դաւթեան,
13. Զարեհ Ճարակեան (Ախալցիսայից),
14. Զոհրաբ խան,
15. Զուլումաթ (Յովհաննէս, Բաղէշի Բաս գիւղից),
16. Թաղէսու (Նոր Ջուղայից),
17. Իւան (Ղարաբաղից),
18. Խանլար Հայրապետեան (Փերիայի Խոյգան գիւղից)⁹,
19. Խաչիկ (արեւմտահայ),

20. Խաչօքազողի (Դարալագեազից),
 21. Խէջօ (Ղազախ, Կարմիր Բլուր գիւղից),
 22. Խորէն Յովհաննիսեան (Ալէքսանդրապոլից),
 23. Կարօ (Վանի Արտամետ գիւղից),
 24. Հըանդ Գիւլմասեան (Պրուսյալից),
 25. Մաղար Առաքելեան (Զարմահալի Մամուքա գիւղից),
 26. Մամիկոն (Իգդիրից),
 27. Մամիկոն Նազարէթեան (Ալեքսանդրապոլից),
 28. Մարտիրոս Զարուխչեան (Ախալցխայից),
 29. Միսաք Տանջոյեան (Խաս գիւղից),
 30. Մուկուչ (արեւմտահայ),
 31. Յարութիւն Գրիգորեան (Ղարաբաղից),
 32. Յարութիւն Քիւչիւկեան (Կարինից),
 33. Յարութիւն (1)
 34. Յարութիւն (2)
 35. Յովհաննէս Խուղոյեան (Դաղաշ) Մալմաստի Սանամերիկ գիւղից,
 36. Յովհաննէս Յարութիւնեան (արեւմտահայ),
 37. Յովհէս Յովհաննիսեան (Խոյի Սէյդաւար գիւղից),
 38. Նաղօ,
 39. Նաւասարդ Գալստեան (Հըայր, Փառակից, Հին Ջուղա),
 40. Նիկոլ (Գանձակից),
 41. Նիկոլ (Խմբապետ),
 42. Նուրօ Խաչատրեան (Վանից),
 43. Շամիլ (Ղարաբաղից),
 44. Պետրոս Մելիք Անդրէասեան (Մուժամբար գիւղից),
 45. Պետրովիչ (Նուխիից),
 46. Մալդաթ,
 47. Մարգիս Տէր Մարտիրոսեան (Թաւրիկից),
 48. Մեթօ (Հացիկից),
 49. Մմբատ,
 50. Մողոն,
 51. Մտեփան Ազնաւորեան (Արծուիկ, Արդուինից),
 52. Մտեփան Տէր Մկրտչեան,
 53. Տիգրան,
 54. Տիգրան Մտեփանեան (Ալեքսանդրապոլից),
 55. Վահան Շահինեան (Մշոյ Արդավանք գիւղից):
- Բացի վերոյիշեալներից, զոհուածների շուրջ մէկ տասնեակից աւելի անուններ յիշուած չեն, այնպէս որ սահմանադրական կոխներին հայերը տուել են շուրջ 70 զոհ եւ դա ի սէր իրանի ժողովրդի եւ նրանց ազատու

Հանգիստ կեանքի:

Այս նահատակներից միքանիսի անունը գրուած է, որոնց հետ նաեւ միքանի այլ ֆիդայիների անունները, թաւրիզի Սր. Սարգիս Եկեղեցու բակում: Նրանց բոլորն էլ եղել են Հ.Յ. Դաշնակցութեան անձնագոհ անդամներ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹԻՒՆԵՐ

1. Այսուեղ կարեւոր է յիշել նաեւ որ դեռևս 1906 թուին, Յարութիւն Յորդանանեանի (Միրզա Յարութիւն) կողմից պարսկերէնից հայերէնի են թարգմանուել *Սահմանադրութիւն Պարսկասպանի Ազգային Խորհրդակցական ժողովի և Ընդդական Կանոններ Պարսկասպանի Ազգային Խորհրդակցական ժողովի գորոյկները և տպագրուել Նոր Չուլայի Վանքի տպարանում, տես՝ Լեւոն Գ. Սինասեան *Նոր Չուլայի Վապարան ու իր Վապարած գորերը* (1636–1972), Նոր Չուլա, 1972թ., էջ 102; էջ 57:*
2. Ա. Ամուրեան, Հ.Յ. Դաշնակցութիւնը Պարսկասպանում 1890–1918, Թեհրան, 1950թ., էջ 102;
3. Յ. Էլմար, **Եփրեմ**, Թեհրան, 1964, էջ 157:
4. Լ.Գ. Սինասեան, «Շամբորդական տպատրութիւններ», **Ալիք** օրաթերթ, Հոկտեմբեր 1967թ.:
5. Լ. Գ. Սինասեան, *Պակսմութիւն Փերիայի Հայերի*, Անթիլիաս, 1971, էջ 149–152:
6. Սրանց բոլորի անունները, մի առ մի, բերուել է *Պակսմութիւն Փերիայի Հայերին Հ.Յ. Դաշնակցութիւնը գորերի մեջ*:
7. **Ալիք** օրաթերթ, 5 Օգոստոս 1955թ., Յ. Էլմար, **Եփրեմ**, Թեհրան, 1964թ., էջ 593–594:
8. Հ.Յ. Դաշնակցութիւնը, էջ 160–162:
9. **Եփրեմ** գրքում գրուած է «ղարաբաղցի», որ ճիշդ չէ, էջ 666:

THE 1906 CONSTITUTION OF IRAN AND
THE PARTICIPATION OF THE ARMENIANS IN THE
1906-1911 CONSTITUTIONAL REVOLT THERE
(Summary)

LEVON G. MINASIAN

The essay is a survey of the military role of the Armenians in the proclamation of and the ensuing struggle for the 1906 Constitution of Iran. It highlights the share the Armenians had in consolidating the power of the constitutional forces in the aftermath of the Constitutional revolt, between the years 1906 and 1911.

The author lists the names of the 55 Armenians who were killed in action, fighting for the constitution against the monarchists. Their leader, Yeprem Khan, headed the internal security forces of the country.

A staunch defender of the constitution, Yeprem Khan recruited a number of Armenians. He was instrumental in subduing the counter-revolutionaries. These had taken under their control Hamadan and were heading for Tehran. Yeprem Khan confronted them near the village of Behar. In this ferocious battle the monarchists lost 250 dead and 150 were taken prisoner. The constitutionalists had 30 casualties between dead and injured. Yeprem khan was killed in this battle.